ԵՐՈՒԱՆԴ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐՈՒԱԾ Գ·

ՏԵՍԻԼ Ա·

ԵՐՈՒԱՆԴ։

Մահապարտ է, մեռցի Կոռնակ։ Վաստակեալ եմ, ոչ կարեմ թօթափել յաչացս զքուն... ա՛յ գազան կատաղի, վագր յարիւն դիւցեալ։ Սակայն զի՞նչ հաւատիք ինքսաւնորին. նա անկեղծութեամբ զանայ զամենայն, զարիւն իւր և զկեանս առաջի իմ հեղու... դու լուռ լեր առաջին մարդասիրութիւն Երուանդայ. յընտանեաց իմոց է պարտաւորն. ամենայն յանցաւոր արդարացուցանէ զանձն. ոչ ուրուք է անձին իւր լինել դատաւոր. մեռցի, մեռցի, մահապարտ է։.. Սակայն իբրև կարօտիս մարդոյ՝ կոչանիցես զկորովին զայն, զրկիցիս 'ի քաջազօր բազկէ անտի... զայր կասկածաւոր առ իս ոչ կամիմ. իմաստուն մշակ ոչ երկայնամտէ և ոչ շատ ինայէ յոստ մի գօսացեալ. մեռցի. թէ և յամենեցունց պակասեցայց՝ ես ընդ իս մնամ, և Տուր առ իս է։ Մահապարտ է, մեռցի Կոռնակ. (գրէ)։ Ո՛հ, ոչ ես հանդարտեմ ծանրութեան քոյ. ընդ այգն կատարեսցի դատակնիքս արեան։ Ո՜ օր, որ եսդ 'ի լուսանալ, զի՞նչ արդեօք 'ի վերայ իմ ընդ քեզ առեալ բերես. ժամ մի, ո՛վ դիք... դիւր արարէք ինձ... փակել զաչս իմ 'ի նինջ...'ի բացէ՛ յինէն 'ի բացէ... անուրջք ցաւագինք... (ննջէ)։

ՏԵՍԻԼ Բ·

ԵՐՈՒԱԶ, ԵՐՈՒԱՆԴ։

ԵՐԶ· (Ննջուր)։ Ա՛հ եղբայր իմ, ննջես խաղաղիկ. (հայէ 'ի գրեալն)։ Վա՛յ ինձ, ահա իմ դատակնիք։ Եղբայր իմ, եթէ առ հեշտութեան սրտի քաղցր 'ի քուն լինիցիս ընդ մահ հարազատիդ, եթէ 'ի տխրութենէ սրտի միաք քո ծանրացեալ յափշտակեցան քնով. ո՞չ երազք ահագինք տագնապեսցեն զքեզ. այո՛ մեռանիմ ես, և հարկ է անյայտ մեռանել. և զայս գործ կատարեցի. այսուհետև ինդութեամբ մեռայց. զոր լեզու ոչ իշխէ խօսել՝ թուղթդ խօսեսցի. (դնէ զնոռղն). դու զիմ դատակնիք գրեցեր մահու, ես զքեզ 'ի մահուանէ ազատեմ։.. Ոտնաձայն լսեմ, ա՜ւաղ, զի՞նչ լինիցի. զողել արժան է. ո՛վ դիք, ձեռն տուք. (Ռոգէ)։

ՏԵՍԻԼ Գ·

ՏՈՒՐ, ԵՐՈՒԱԶ, *Թագուցեալ*, ԵՐՈՒԱՆԴ, 'ի քուն։

Տր· (Մթանէ լուսոյ սուր ծածուկ ոնէլով առանց պարէնդ. գէնեալ անդ զբաժանն, ասէ)· Այս բաժակ է մահու, զոր ասէր ցիս արբուցանելնոցա ենդաւ։ Ննջիս դու, բռնաւոր վերագ· քուն վերջին ընդ ջիս· յառաջին թշնամութիւնս իմ յաւելաւ այժմիկ և այն զի որդի եղէ ես Արդամայ։ Ոչ զք գըտաւ ինձ նախանձաւոր, ես միայն եմ արժանի այս պարծանաց։

ԵՐԶ· (Ի ցած)· Ա՛յ անօրէն չարագործ։

Տր· Ահաւասիկ պաշտօնեայն արդարութեան (հանէ զսուրն)· առանց պատենից պարտաստեալ 'ի գործ, և զի մի՞ զ պատահեսցէ ինձ սուսեր ընդ մէջ տեսանել զիս առ քեզ գիշերի· (ընդ ոռնոռ ըզդապանիփն)։

ԵՐԶ· Զի՞նչ գործեցից· երկի՛նք, 'ի քեզ յուսացայ։

Տր· Մահապարտ է, մեռցի Կոռնակ· ո՛վ բաղդ բարերար· այլ նախ դու, անօրէն բռնաւոր· ապա սովին մատանցդ գրով ես ինքնին տաց կոչուսանել և զեղբայրն քո· ո՛հ, զի՞մրդ խայտամ կանխաւ տեսեալ զդունդագունդ բլսուսին մելեկան արեանդ· հապա, ո՛վ դիք· մեռիր, սատակեաց....

ԵՐԶ· (Ելանէ)· Ի բաց կաց, ա՛յ արիւնարբու գազան, զի՞ գործես։

Տր· Կոռնակ արձակ յապարանս· թոյլ տուր ինձ....

ԵՐԶ· Տուր 'ի բաց զզէնն, ենդագործ· այժմ զարթուցանեմ, չինայեմ 'ի քեզ։

Տր· (Տայ)· Ա՛ռ ընկալ։ Զարթիր, արքայ, մատն եղեր թշնամւոյդ։

ԵՐԶ· Ա՜յի, լուռ լեր։

ԵՐԴ· (Զարթնոյեալ)· Ո՛վ դիք, զի՞նչ իցէ· ո՞ այն որ ցաւէ զիս։

ԵՐԶ· Դիւցազուն տէր...

ԵՐԴ· Կոռնակ չղթայազերծ· ո՛վ սրամտութեանս· զի՞ ինդրես դու ասա ենդոզ դաւաճան· սպանանե՞լ զիս, զի մի՞ ոք գացի վկայ չարեսցդ· այսչափ ներելս 'ի քեզ, անօրէն, արդարև արժանի էր պատուհասի, սակայն ոչ 'ի քէն։

ԵՐԶ· Տէր իմ արքայ, 'ի փրկել զքեզ եկեալ է իմ այր...

ԵՐԴ· Կարկեաց, տարտարոսին զգայութի ժանտ· ցոր վայր ակն ունիս, անմիտ, խաբել զմեզ· ո՞չ ձայն Տուրայ էր որ զարթոյց զիս։

Տր· Հազիւ իմն տագնապաւ դիմեցի, դիւցազունդ։

ԵՐԴ· Եհաս քեզ ժամ համբանալոյ· լուր զդատակնիքդ· (կամ ասանուլ ըզդապանիփն, գայ 'ի յեռոռ նորա Ռոռղն Երոռաղայ)· Բա՛ռք, զի՞նչ է փոփոխումնս· ո՞ր իցէ գիրս։

ԵՐԶ· Ահաւասիկ դիւցազունդ· այն է իմ դաւել զքեզ։

ԵՐԴ· (Ընդ նոռնոռ զնոռղն Երոռաղայ, և ապա ասէ)· Ի՞մ հաւատարիմ դաւէ զիս· այլ ինչ չկարես ասել· ո՞ր իցէ գիրս, ո՞ այն դաւաճան· Տուր, Մեհրան, աղէ, ասացէք։

Տր· Ա՛հ դիւցազունդ, յԵրուանդայ լսեմ ես զայդպիսի բան· եթէ ոչ նախ ամենասցին ասկերքս ընդ փայլակնացայտ դիցն ցամամբ· աչք քո տեսեր, տակաւին երկեալս։

ԵՐԶ· (Մեկոռի)· Ապա հրաման ասա և ինձ ուխտանենդ լինել։ Տէր արքայ, սա ինքն Տուր վայրկի մի յառաջ... ո՛հ, զի՞ գործեմ, երդմնազանց լինիմ։

ԵՐԴ· Իշխես ես բան յառաջ ձգել, խաբել զիս·

բարբառ քո դատեցաւ զքեզ, զի պակասեաց. (կամ հալածեն զնա):

ՏԵՍԻԼ Դ.

ԶԱՐԵՀ և առաջինքն:

Զար. Դարձո զձեռն քո, տէր արքայ, մի՛ տարապարտ շաղախեր յարիւն արդար:

Երդ. Արդա՞ր, զի՞նչ իցէ:

Զար. Յայտնեցաւ նենգաւորն. Տուր է մեր թշնամի, և խռովարար տան քո:

Երդ. Ո՞րպէս:

Տր. Զիա՞րդ:

Զար. (Տայ զԹուղթն). Ահաւասիկ զայս առաքէ առ քեզ Միհրան: Այն ինչ իբրև նա փոքու ձեռամբ զնայր ըստ քում հրամանի ազդ առնել Սմբատայ զուխտիցն յանձնառութիւն և զհրաւէր յերդումն, հասեալ մօտ յԵրասխաձոր 'ի փորուած քարաժայռին տեսանեն զայր մի գաղտագողեցեալ սողալով ընդ անկոխ մացառուտս ծմակ անտառին. յերկիւղէ սպառազինացն որջանոյ գազանն. հասեալ կորովեացն 'ի վերայ՝ քարշեն զառաջեաւ....:

Երդ. Առ ի՞նչ Տուր այլագունել երեսացդ. և ապա՞:

Զար. Հարցանեն քննեն յուզեն շուրջ զայրն, գտանեն զԹուղթ, խոստովան լինի երդմամբք ահաւորօք զի հրապուրեալ 'ի Տրդատայ Թուղթ գաղտուկ առ Սմբատ տանէր. ոչ զայս միայն նուագ, այլ և յառաջ ժամանակաւ:

Տր. Ստեաց, արեամբ լուացի լեզուն նենգախօս:

Զար. Զանկեղծ խոստովանութեանն ընկալաւ նա վարձս 'ի Միհրանայ, զմահ արդավախճան:

Երդ. (Բանալով զԹուղթն). Տուր իմ թշնամի՞, մատնումն առ թշնամիս անդր:

Տր. Մի՛ այդպէս երագեր 'ի դատաստան, տէր իմ. գիտէ արդարութիւնն ածել 'ի վերայ ապաշաւ:

Երդ. Ի բաց կաց. արդ ամենեքին նենգեն ինձ. մի՛ դիք, որպիսի ինչ իցէ օրս այս. (ընթեռնու). Երուազ... Արգամ...

Երջ. Վա՜հ, եղուկ զինև, այս միայն պակասէր յինէն:

Երդ. (Ընթեռնու). Ո՞ւր իցէ Երուազ. 'ի քաղաքի՞ աստ անծանօթ յինէն:

Տր. Ահաւասիկ է, դիւցազունդ, և գաւառի և գնդի և գահու, դից և քրմութեան մատնիչ և դահիճ Երուազ:

Երդ. Եղբա՞յրն իմ, քրմապետ դիցն 'ի Բագարանի:

Երջ. Այո, եղբայր իմ, ես ինքն եմ Երուազ քոյին հարազատ, բաղդին ծաղր, և յաստուածոց յարացոյց պատուհասի:

Երդ. Ի բա՛ց. Երուազ զօրավա՛ր. ընդ դովլին զրահիւք ես ոչ ճանաչեմ զԵրուազ:

Երջ. Զեղբա՞յր քո, ա՜հ, ծանիր զիս, և ապա սպան. այս քանիցս անգամ զարիւն իմ քեզ նուիրեցի. գիտեմ զի ինձ այս վերջին իցէ. արժանի եմ մահու իբրև մատնիչ մեռանել, ոչ քո ոչ գահուն արքունի, քաւ լիցի. այլ քրմութեան և դիցն տաճարի. գիտեմ զիարդ այս գործ յանդգնութեան աններելի է՝ յունկն արքայի և բոլոր աշխարհիս. ահաւասիկ եմ սպան զիս, այլ յիշեա զի սէր հարազատութեան և նախանձ արեան վառեաց զիս յայս հանդէս, որ, ա՜հ, ոչ յայլ ինչ կատարեցաւ, բայց 'ի մահ ծնողիս և 'ի մահ հայրապետնիս. այս են իմ յանցանք, այս իմ մահապարտութիւն. աղէ սպան զիս, զի՞ զանդաղիս, ոչ իշխեմ խնդրել զհամբոյրդ սիրոյ հարազատութեան. միայն զկեղտ անուանն նենգութեան 'ի բաց արա յինէն, և սպան զիս:

Երդ. Զհա՞յր մեր սպանէր, Երբ և կամ զիա՞րդ, ո՞ւր. ո՞ արդեօք էր նա:

Երջ. Ի պատերազմին յանծանօթս, և անուն նորա անյայտ. այս իսկ էին պատճառք գիշերախառն հատուածելոյս:

Երդ. Հայրն մեր սպանաւ 'ի քէն, 'ի քէն յորդւոյդ. ո՜հ, զիա՞րդ հազիւ ծանուցեալ կարօտացաք 'ի նմանէ. և տակաւին կենդանի՞ կաս դու, Երուազ:

Երջ. Եթէ ոչ սէր քո բանադատեալ էր՝ ոչ կայի կենդանի. կարող էր նոյն ձեռն որ զծնողն սպան՝ և զքեզ իւր պատառել. սակայն այժմիկ ընդ հօրն իմոյ մահուն և զհարազատդ իմ մնայր ինձ աշխարհել. և կրկին դառնութեամբ հոգի երեւեալ 'ի սանդարամետս խուճապիմք ճեպել: Փրկեցի զքեզ, այս շատ է ինձ. գոնեա նշոյլ մի խնդութեան ընդ իս տանիմ: Արդ աղէ սպան զիս, եղբայր իմ. երդմնեցուցեալ զքեզ 'ի քոյին արև՝ որչափ իմովանն ամենայն ինչ վճարեցաւ. եթէ խուն մի այլ բանադատես զիս՝ երդմնահար և ապերախտ մեռանիմ:

Երդ. Տուր... Երուազ... 'ի բանս զերկոսին ես. շատ իսկ կասկածաւոր էն և երկոքեան: Երթայք դուք 'ի բանտ, անօրէնք, և ես աստ սպանից զՍմբատ և զԱրգամ. ոչ կարասջիք խափանել:

Տր. Խորտակեսցէ արդարութիւն զկապանս իմ:

Երջ. Ոչ նոր ինչ են ինձ բանտ և կապանք. (ելանէ ընդ Տուրայ և Զարեհի):

Երդ. Երկոքին ես, կամ մի 'ի նոցանէ պարտաւոր է, չխնայեմ 'ի սիրելին, ոչ ներեմ հարազատին:

ՏԵՍԻԼ Ե.

ՄԻՀՐԱՆ, ԵՐՈՒԱՆԴ

Միհ. Դիւցազունդ, ազդ արարեալ իմ Սմբատայ զպատգամաւորութիւնս՝ աստ առ դուրս հասեալ կան:

Երդ. Ո՞ւր իցեն, արբուցից նոցա զարտմութիւն իմ. տեսչութիւն անմահից, զի խափանեցաւ 'ի նոցանէ Թուղթդ:

Միհ. Զի՞նչ բանք էին 'ի նմա:

Երդ. Թո՛յլ տուր այժմ, ապա լուիցես: Դուք արդարագործ վրէժխնդիր դիք, բոց տոչորիչ վառեցէք յերակունս նոցա զայս Թոյն մահաբեր. (երթայ 'ի բանակն):

Միհ. Ճռնչէ դուռն երկաթի, նոքին իսկ են:

ՏԵՍԻԼ Զ.

ՍՄԲԱՏ, ԱՐԳԱՄ, առաջինքն:

Երդ. Զիա՞րդ, դո՞ւք միայն էք. ո՞ւր իցէ Արտաշէս:

Սմբ. Զէր նա աստ ընդ մեզ 'ի բանակի, տակաւին ո՞չ գիտէք. եթէ ասէր ոչ այսպէս անգործ

Տեայր Սմբատ. բայց ակն ունիմք 'ի մեծոյ գաղտնեաց նորա։

Արդ. Ասացէ Երուանդ զխորհուրդ կամաց իւրոց. մեք նորա եմք հազարապետք, և մեզ յանձն է ամենայն իշխանութիւն պատերազմիս. ոչ ես նախ խոստացայ զմարզպետութիւն միոյ կողմանն աշխարհիս, և ես ինքն պատրաստ եմ երդնուլ առաջին։

Երդ. Եւ զի գուք նախ խոստանայք, արդ և ես հաւանեալ եմ. բազմեցարուք։ Զմտաւ ածեալ իմ զաւեր աշխարհիս և զկոտորած համազգեաց՝ զոր երբեմն գուք ինձ յուշ առնէիք, ոչ կամիմ նորոգել զմարտս, որ յայտ իսկ երկոցունց կողմանցս վճարեսցի ահագին արեամբ և ամբաւաղխութիւք։ Զեր 'ի յաջողուած բազդին է վստահացեալ, և մեր յանհնարին ամրութիւն քաղաքիս. սակայն բազդն զբազումս ծաղր արար, և ամրութիւն քաղաքի ոչինչ է 'ի կամել բազդի. և ո՞ գիտէ ուստ ուստիք ճակատագիր կայ անկանել 'ի մարտին։ Մինթէ սրտմտութիւն մարդոյ մշանջեան իցէ. եթէ ոչ ասացուք վախճան բարկութեան՝ փոքր միւս ևս՝ և աշխարհս յանապատ եղիցի. և գունդ մի միայն թշուառական մնասցէ կանանց և աղաղրի մանկտւոյ գուժել կոծել զհարս և զամուսնս իւրեանց։ Սակայն խոստովան լինիմ զոկարութիւնս իմ, թէ այսպէս ախորժէք կոչել, ոչ ևս ամաչեմ առաջի բարեսիրացդ իմոց. սիրտ Երուանդայ ոչ հանգուրժէ՝ և չէ իսկ ծնեալ անիշխանութեան. ասացի ինձ իշխանութիւն միոյ կողման աշխարհիս, և ամիսոփեմ ես զձեռն իմ 'ի պատերազմէս. իջանեմ 'ի գահէն՝ երկոցուն կողմանցս բարեաւ. ապրիք մնէք՝ ձեր է ամենայն։ Դուք ինքնին գիտէք զի չէի և չեմ անարժան իշխանութեան. որ զարդիւնս մշակին կամիցի գիտել՝ հայեսցի յանդաստանն. եթէ քաջութեան՝ վկայ են ինձ 'ի մեծոյ Ուտէացիք և աշխարհս ամենայն. եթէ խաղաղութեան՝ վկայեն քաղաքս Երուանդաշատ, Բագարան, Երուանդակերտ, ամենեքին իմ դաստակերտք. վկայէ և անտառն Ծննդոց. վկայեն և գանձք արքունի սփռեալք և բաշխեալք 'ի գոգս ամենեցուն։ Եւ որպէս անհնարին թշնամի ծանեաւ զիս Արտաշէս, նոյնպէս հաւատարիմ բարեկամ ունիցի զիս։ Իմն այս է. զինչ գուք։

Սմբ. (Վայր դ հայն ընդ դէնն). Բիւր անգամ արհամարհեալ զմեզ, և այսպէս անագանի զգաստացեալ, չէր արդեաք արժան լսել քեզ. էր և մեզ բազում ինչ հակառակ քեզ 'ի գէմս բերել, սակայն անցցեն. յօգուտ աշխարհիս ըստ կամաց Արտաշիսի՝ զոր միայն յակն եգեալ է՝ ներեմք զամենայն, յանձն առնումք զամենայն արտաքոյ վատութեան. այս յայտնի է ամենեցուն, և ևս առաւել քեզ, զի ոչ առ երկիւղի ինչ և կամ տկարութեան 'ի գաշինս ապաւինեցաք. և երդումն ուխտի դիցն անմահից վկայեսցէ մեզ զի ոչ ստեմք և ոչ միով իւիք. հապա, երթիցուք 'ի տաճար. (յառնեն)։

Երդ. Ցերուանդաշատ չիք տաճար Աստուածոց. իմ զամենայն 'ի Բագարան հաստատեալ է առանդորութեան արքայանիստ քաղաքիս. ամենայն վայրք աստուածոց են, ասա կուռացուք զերդումն։ Աւասիկ են սպասք սրբութեան կրօնիցն. ձեռին մարդոյ չիք մերձեցեալ 'ի նոսա. մեծի գենպետին պատրաստեալ է։

Սմբ. Արդ ազէ տուր երդումն անմահից իջանել այսօր 'ի գահէ այսր։

Երդ. Ո՞ւրպէս. ես նախ յառաջեցից քան զձեզ. ապա եթէ նենդիցէք ինձ. գուք երդուիք նախ հանել ինձ մասն յերկրէ իմմէ, ապա և ես թողուլ իջանել 'ի գահէս։

Արդ. Զիա՞րդ երդուիցուք տալ քեզ զոր չունիմք. երդուիր դու նախ տալ մեզ զերկիրն, և ապա մեք քեզ 'ի նմանէ մասն մի։

Երդ. Սակայն ակն ունիք խորամանգել զիս. երդմնի առնել իջանել 'ի գահէն, և ապա զեղծանիցիք նովաւ իջուցանել զիս բռնի։

Սմբ. Քո իսկ սիրտ վկայէ անհանճար խորհրդոյդ. ապա և դու ակն ունիս սովին երդմամբ իբրու բարեկամս զմեզ ողջունելով ձերբակալս 'ի քաղաքիս դաւել զմեզ. ոչ եկաք միւսանգամ լսել շաղակրատանաց։

Երդ. Ո՛վ թշնամանացս, և զայդ խորհել անգամ ժպրհեցայք 'ի վերայ իմ. օն և օն արասցեն ինձ դիքն եթէ ընդ միտ անգամ անկեալ էր իմ այդպիսի ինչ։

Սմբ. Քաջ է. առէք ինձ այսր զբաժակն. լուարուք ամենեքին. (խլէալ 'ի յեռին գբաժանն)։ Ահաւասիկ, ո՛վ դիք, առաջի ձեր է Սմբատ. ձեր առաջի մերկապարանոց կայ արդարութիւն նորա և ճշմարտասիրութիւն. յիմ վերայ ցասումն ձեր ամենայն, յիմ վերայ շանթք հրախաղացք եթէ նենգախօս է լեզուս, եթէ ստեմ ես յասելս, մահ է 'ի բաժակս այս։

ՏԵՍԻԼ Է.

ՏՈՒՐ, ԵՐՈՒԱԶ, առաջինքն։

Տր. Մահ է 'ի բաժակս, դարձո զձեռն քո. ա՛հ, հայր իմ, մեռանի՞ս նենգաւ։

Արդ. Բա՛ռք։

Երդ. Նենգաւոր բերան. Տուր արձակեա՛լ. փախուցեալ 'ի բանտէ։

Արդ. Որդեա՛ իմ կապեալ. արկեալ 'ի բանտ։

Երդ. Ե՞րբ եղև դա քո որդի։

Տր. Այսօր, բռնաւոր բարբարոս. զինչ ակն ունէիր, ապանանե՛լ զիս. աւասիկ ես եմ քո թշնամին, ես քո արեան ծարաւի, զոր այնչափ յուզէիր. ես զեղբայր քո զԵրուազ խնդրէի որսալ, ես էի որ սատ գիշերի զքեզ դաւէի, և զԹուզրմն զայն ես եռուս տանել։ Արդ զոր կամք են արա վաղվաղակի. վայրիկ մի ևս՝ և ոչ ինչ կարասցես. ժողովուրդն ամենայն իմ է. նա զիս արձակեաց 'ի բանդէ. նա և զԵրուազ ընդ իս պատրեալ յանուանէն. ապա թէ ոչ՝ արդ ևս նա 'ի միջոյ պակաս գտանէր, և դու զհետ նորա։

Երդ. Ա՜յլ դու նախ աստանօր 'ի բազկէ իմմէ. (կամ զՏուր սպանանել)։

Երզ. Ա՜հ, եղբայր իմ, բա՛ռք...։

Արդ. Դարձո զսուրդ։

Սմբ. Ամիսոփեա զձեռն քո խուժադուժ բռնաւոր, բայց եթէ հարկանեմ զԵրուազ. (դնէ սուր 'ի սիրտ նորա)։

Երդ. Ա՜նա... այլ թող մեռցի և նա, մեռայց և ես, ինդրեսցի 'ի սմանէ վրէժն։

Սմբ. Մխեմ զսուսերս, արիւն հարազատիդ 'ի քեզ ցայտեսցի։

Երդ. Մեռցի, այլնախ Տուր. ո՜հ, կարձեա զձեռն քո. ա՜հ, եղբայր, զի՞ գործեցեր ընդ իս, ընդէ՞ր եկիր այսր։ Յե՞րբ է այս և քեզ, իբրոխտ ապերասան, խոչ ընդ ոտն ինձ անկանել առաջի։ Ի բաց կացէք յինէն ամենեքին. Արդամ յիւր բանակ, Տուր 'ի բանտ. և դու ապստամբ տիրադրուժ, կաց այսր առ իս։

Արդ. Թողլ՞ց ես զՏուր. ո՞ր բաղդ չարաշուք կարէ օձաթել զմեզ 'ի միմեանց. (Ելանէն)։

ՏԵՍԻԼ Ը.

ԵՐՈՒԱՆԴ, ՍՄԲԱՏ։

Երդ. Աղէ յայտ այսր մատիր, յիշեա զառաջինն, և սօսափիւն զոսկերոքդ հարցի. այժմիկ դատաստան է քո, գլուխ չարեացապարտ. այժմիկ հասցէ քեզ վրէժինդրութիւն 'ի դից։

Սմբ. Ե՞րբ յառեցեր դու զակն 'ի մատեան Ճակատագրին, կամ ե՞րբ տեսեր դու զդիսն վրէժ երբէք յարդարոյ առնուլ. գիտեմ զի բռնաւորաց է ոք այլ Աստուած՝ մեզ անծանօթ։

Երդ. Այժմ բաղդն որոշեսցէ ընդ իս և ընդ քեզ. միթէ և արդ երկնչիս ինչ 'ի նենգութենէ. ո՞չ այս հանդէս է սրոյ։

Սմբ. Եւ միթէ սուր Սմբատայ դարձաւ երբէք ունայն. 'ի սիրտ արի նենգութիւն ոչ է. և որ միանգամ նենգաւորն է, անմասն է արութեան. յանդուգն է որ յելից անսի՝ զմուտս արփւոյն առնու գուշակել։

Երդ. Հապա, կամ ես և կամ դու. զայսչափ ամս արեան միմեանց ծարաւէաք, արեամբ մերով զմիոյ կողման կանգնեսցուք յաղթանակ։

Սմբ. Հապա, ինչցուք յասպարէզ յանդիման երկուց Ճակատուցս. սիրտ Սմբատայ յայդ վաստութիւն երբէք ոչ նուաստացի ընդ յարկաւ յանկեան ուրեք ընդ ախոյեանին 'ի մարտ մտանել՝ յաղթանակ կանգնել։

ՏԵՍԻԼ Թ.

ԶԱՐԵՀ, ԵՐՈՒԱՆԴ, ՍՄԲԱՏ։

Զար. Տէր արքայ, հաս փութա 'ի զօրն. պարիսպքս առ հասարակ յելանել արուսեկին հընչեցին գալստեամբ Արտաշիսի, և օդդ ամենայն Սարամատ որոտայ։ Մայրիս ինն բիւրաւոր նիզակաց աւազակոյտ քաջաց կորովեաց զինի իւր Եբեր Արտաշէս, և Ճակատի 'ի պատերազմ։ Քաղաքս ամենայն սատանեալ արհաւրոքք 'ի տունս իւրեանց ամրացան յաղերս աստուածոց. ոմանք 'ի ժողովրդենէն ապստամբք շուրջ գան խռովեն զբանակն. առ դրան ամրին Սմբատայ ընդ ակառեանն խմբեցաւ պատերազմ. զօրահատոյց եղև Արդամ մինչև յաշտարակն հիւսիսի գալ թափել յինքեանս զՍմբատ։

Սմբ. Ի՞նանիր աշխատ եղև. զՍմբատ չիք ոք որ արգելուցու։ Թէ ախորժես յասպարէզ ելցուք. բայց թէ ոչ՝ արդ ժամ է մեզ յաղթութեան. (Ելանէն)։

ՏԵՍԻԼ Ժ.

ԵՐՈՒԱՆԴ, ԶԱՐԵՀ։

Երդ. Ա՜հ, ընդէ՞ր է ինձ անսովոր երկիւղս. սիրտ իմ, այդպէս արագ թափեցար յինէն... չէ՞ ինչ երկիւղս. սկիզբն է յուսոյ, երկիւղ և յոյս 'ի միասին ծնանին, 'ի միասին և մեռանին։ Աղէ Զարեհ հասո առ նոսա զՍմբատ. մի՞ 'ի նորա ինչ աղագս մոլեսցի դաղանութիւն Արդամայ։

Զար. Կանխաւ իսկ էր նորա արտաքոյ ձեռն մի հզօր սպասեալ նմա. մի՞ ինչ խռովեսցի արքայ, այլ փութասցի 'ի բանակն պատուէր տալ զօրավարացն. և կարձել զՏուր 'ի միջոյ. զի Արդամ 'ի միտս խիզախեալս է։

Երդ. Արդ ես անդր սրանամ. երևելս միայն չատ է սպային. և ապա դարձայց սաստկութեամբ հոգւոյս պատահել Տուրայ։

Վերջ Գ. Արարուածոյն։

ՅԱՂԱԳՍ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌՈՑ

Ե

Հող, ջուր, օդ, լոյս, ջերմութիւն։

Բուսոյ կազմակերպութեան՝ աճելուն և բազմաւորելուն վրայ հարկաւոր եղածին չափ տեղեկութիւն տալէն ետքը, պէտք է այժմ խօսիմք հողի, ջուրի, օդի, լուսոյ և ջերմութեան վրայ, որք բնական և ուղղակի կերպով բուսականութեան գործակից եղող պատճառներ են։

Հող։ Զիք տարակոյս, որ հողը բուսական արարածոց աճելուն և մշանջենաւորապէս մնալուն առաջին հարկաւոր գործակից պատճառներէն մէկն է։ Վասն զի բոյսք ոչ միայն երկրի մայրական ծոցոյն մէջ կը թխսին և կը ծլին, այլ և անոր մէջ կը գտնեն իրենց աճման համար հարկաւոր եղած սնունդը։ — Սովեալ ու 'ի ծարաւոյ նեղեալ կենդանիք իրենց կեանքը պահելու համար կ'երթան կու գան ուտելիք կը ճարեն. իսկ բոյսերը ոչ են այսպէս, այլ մէկ տեղւոյ վրայ կաշկանդեալ ու անշարժ կենալու պարտաւորած ըլլալով, իրենց կենաց հարկաւոր եղած սնունդն ալ